ԳԱՐՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության
ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0002-3939-9341

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Վերջին ժամանակներում մարդկությունը սկսել է գիտակցել, որ տնտեսության զարգացումը սերտորեն կապված է շրջակա միջավայրի պահպանության արդյունավետության հետ: Հատկանշական է, որ էկոլոգիական խնդիրների լուծումը ոչ միայն չի խոչընդոտում, այլև հակառակը՝ նպաստում է տնտեսության զարգացմանը՝ հնարավորություններ ստեղծելով կայուն զարգացման համար: Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համաշխարհային փորձը վկայում է, որ շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության արդյունավետ մոտեցում է տնտեսական կառուցակարգի կիրառությունը: Ուստի աշխատանքում ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ-ում շրջակա միջավայրի, մասնավորապես մթնոլորտային օդի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգը, դա վերլուծվել է ըստ արտանետման աղբյուրների տեսակների, դիտարկվել են մթնոլորտային օդ արտանետումների շարժընթացները և դրանք պայմանավորող հիմնական գործոնները, ներկայացվել է մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված նյութական խրախուսման ազգային փորձը, այս ամենի արդյունքում կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

Հիմնաբառեր. *մթնոլորտային օդ, տնտեսական կառուցակարգ, բնապահպանական հարկ, անշարժ աղբյուր, շարժական աղբյուր, հարկային արտոնություն*

JEL: Q53, Q57
DOI: 10.52174/1829-0280_2022.2-132

Ներածություն: Մթնոլորտային օդի աղտոտումը համաշխարհային էկոլոգիական հիմնախնդիրներից մեկն է: Դա տնտեսական գործունեության բացասական հետևանք (էքստերնալ) է, որը սոցիալական տեսանկյունից դրսևորվում է մարդկանց առողջության վատթարացմամբ և կենսագործունեության պայմանների քայքայմամբ, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում տնտեսական զարգացման վրա:

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) վերջին ուսումնասիրությունների՝ 2016 թ., աշխարհում մթնոլորտային օդի աղտոտվածությամբ պայմանավորված, մահացել է 4.2 միլիոն մարդ[1]: Ըստ Համաշխարհային բանկի փորձագետների՝ միայն Ռուսաստանի Դաշնությունում մթնոլորտային օդի աղտոտվածությունն առաջացնում է մահացության լրացուցիչ 90 հազար դեպք, ինչի ընդհանուր տնտեսական վնասը մոտավորապես համապատասխանում է ՀՆԱ 5%-ին: Նույն պատճառով ԱՄՆ-ում գրանցվում է մահացության 230 հազար լրացուցիչ դեպք, որի տնտեսական վնասը համապատասխանում է ՀՆԱ գրեթե 1%-ին[2]:

Այսպիսով՝ մթնոլորտային օդ արտանետումների կրճատումը ժամանակի հրամայականն է: Աշխարհի զարգացած երկրներում արդեն իսկ խոսում են ապագայում զրոյական արտանետումների մասին: Վերջերս ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենը ստորագրել է հրաման՝ մինչև 2050 թ. զրոյական արտանետումների հասնելու մասին[3]:

Ինչևէ, ՀՀ-ում մթնոլորտային օդ արտանետումները դրսևորում են աճի միտում, ինչը ազդակ է մթնոլորտային օդի պահպանության արդյունավետության բարձրացման անհրաժեշտության, ուստի հոդվածում նպատակ է դրվել ուսումնասիրելու ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգը, դրա առանձնահատկություններն ու արդյունավետությունը:

Գրականության ակնարկ: Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարվել ոլորտի այնպիսի հեղինակավոր աշխատություններում, ինչպիսիք են Օ.Ս. Շիմովայի, Ն.Կ. Սոկոլովսկու «Բնօգտագործման տնտեսագիտություն»[4], Ս.Վ. Մակարի «Բնօգտագործման տնտեսագիտություն»[5], Վ.Ի. Կարակեյանի «Բնօգտագործման տնտեսագիտություն»[6], Կ.Վ.

---

[1] Տե՛ս WHO, Burden of disease from ambient air pollution for 2016, April 2018, էջ 1, https://www.who.int/airpollution/data/AAP_BoD_results_May2018_final.pdf (08.01.2022)

[2] Տե՛ս **Кенесары Д.У., Кенесариев У.И., Оразымбетова А.М., Досмухаметов А.Т., Кенесары А.У.,** Применение методологии Анализа рисков здоровью населения Казахстана от загрязнения атмосферного воздуха // Вестник КазНМУ, №3-1, 2014, https://cyberleninka.ru/article/n/primenenie-metodologii-analiza-riskov-zdorovyu-naseleniya-kazahstana-ot-zagryazneniya-atmosfernogo-vozduha (08.01.2022)

[3] Տե՛ս THE WHITE HOUSE, https://www.whitehouse.gov/ceq/news-updates/2021/12/13/icymi-president-biden-signs-executive-order-catalyzing-americas-clean-energy-economy-through-federal-sustainability/ (09.01.2022)

[4] Տե՛ս **Шимова О.С., Соколовский Н.К.,** Экономика природопользования: учеб. пособие, 2-е изд., М.: ИНФРА-М, 2011, 362 էջ:

[5] Տե՛ս **Макар С. В.,** Экономика природопользования: конспект лекций, 2-е изд., М.: Издательство Юрайт, 2011, 208 էջ:

[6] Տե՛ս **Каракеян В. И.,** Экономика природопользования: учебник, М.: Издательство Юрайт, 2011, 576 էջ:

Պապենովի «Բնօգտագործման տնտեսագիտություն»[7], Ա.Պ. Մոսկալենկոյի, Վ.Բ. Գուտենևի, Ս.Ա. Մոսկալենկոյի, Վ.Վ. Դենիսովի «Բնօգտագործման և ռեսուրսախնայողության տնտեսագիտություն» դասագրքերը[8], Ա.Վ. Անիսիմովի «Կիրառական էկոլոգիա և բնօգտագործման տնտեսագիտություն»[9] ուսումնական ձեռնարկը: Ընդհանուր առմամբ, այս աշխատություններում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգի վերաբերյալ տրված սահմանումների ու բացատրությունների հիման վրա շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգը կարելի է սահմանել որպես հարկադրական և խրախուսական բնույթի տնտեսական ձևերի ու մեթոդների համակարգ, որը նպատակաուղղված է տնտեսական գործունեության տնտեսական և էկոլոգիական արդյունքների ներդաշնակեցմանը:

Գիտական գրականությունում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգը երբեմն անվանվում է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգ, երբեմն էլ՝ բնօգտագործման տնտեսական կառուցակարգ, սակայն, ըստ էության, այս երկու եզրույթները բնորոշում են միևնույն համակարգը:

Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգին անդրադարձ է կատարվել նաև հայրենական գիտնականների աշխատություններում: Մասնավորապես՝ Լ. Հակոբյանի «Բնօգտագործման էկոնոմիկա»[10] ուսումնական ձեռնարկում, Ն.Ս. Թորոսյանի, Լ.Վ. Զարխիֆալակյանի, Ս.Ա. Մինասյանի, Մ.Զ. Պետրոսյանի, Գ.Հ. Թորոսյանի «Էկոլոգիական էկոնոմիկա»[11] դասագրքում ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի տեսակները, ձևավորման ուղղվածությունները, դրան բնորոշ որոշակի առանձնահատկություններ:

Առանձնակի ուշադրության է արժանի Ս.Ա.Գևորգյանի, Ռ.Ա. Պետրոսյանի, Ա.Պ. Գևորգյանի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում»[12] գիտական հետազոտությունը: Այս աշխատանքում հեղինակները պարզաբանել են շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի էությունը, անդրադարձ են կատարել այդ կառուցակարգի կիրառման միջազգային փորձին, վերլուծել են տվյալ ժամանակաշրջանում գործող բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգն ու առանձնացրել դրա կատարելագործման ուղիները:

---

[7] Տե՛ս **Папенова К.В.,** Экономика природопользования: учебник под редакцией– Э40. М.: ТЕИС, ТК Велби, 2010, 928 էջ:

[8] Տե՛ս **Москаленко А.П., Гутенев В.В., Москаленко С.А., Денисов В.В.**, Экономика природопользования и ресурсосбережения: учебное пособие. Ростов-на-Дону: Феникс, 2014, 478 էջ:

[9] Տե՛ս **Анисимов А. В.,** Прикладная экология и экономика природопользования: учебное пособие . Ростов-на-Дону: Феникс, 2007, 317 էջ:

[10] Տե՛ս **Հակոբյան Լ. Լ.,** Բնօգտագործման էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., ՀԱԱՀ, 2014, 408 էջ:

[11] Տե՛ս **Թորոսյան Ն.Ս., Զարխիֆալակյան Լ.Վ., Մինասյան Ս.Ա., Պետրոսյան Մ.Զ., Թորոսյան Գ.Հ.,** Էկոլոգիական էկոնոմիկա: Դասագիրք, ՀԱՊՀ, Եր., «Ճարտարագետ», 2018, 276 էջ:

[12] Տե՛ս **Գևորգյան Ս.Ա., Պետրոսյան Ռ.Ա., Գևորգյան Ա.Պ.,** Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2014, 60 էջ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները սակավաթիվ են, իսկ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում վերջին տարիներին կատարված առանցքային փոփոխություններից հետո իրականացված գիտական աշխատանքներ, մեր կարծիքով, առկա չեն, ինչն էլ ընդգծում է այս ուսումնասիրության կարևորությունը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածում փաստական նյութերի ձեռքբերման և առաջադրված նպատակների իրականացման համար օգտագործվել են հետազոտության տեսական մեթոդներ, որոնք կիրառելի են հետազոտության ինչպես տեսական, այնպես էլ փորձառական փուլերում, գործադրվել են նաև փորձառական մեթոդներ: Մասնավորապես՝ կիրառվել են հետազոտության պատմական, վերացարկման, վերլուծության և համադրման, վիճակագրական, ինդուկցիայի և դեդուկցիայի, ինչպես նաև այլ մեթոդական մոտեցումներ:

Նշված մեթոդների միջոցով ուսումնասիրվել է ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգի ձևավորման ու զարգացման գործընթացը, բացահայտվել է ՀՀ-ում գործող տնտեսական կառուցակարգի հիմնական գործիքակազմը, ընդգծվել է բնապահպանական հարկերի կարևորությունը մթնոլորտային օդի պահպանության հարցում, իրականացվել է մթնոլորտային օդի աղտոտման համար բնապահպանական հարկերի վերլուծություն ըստ արտանետման անշարժ և շարժական աղբյուրների, գրաֆիկական պատկերմամբ ներկայացվել են 2016–2020 թթ. արտանետման անշարժ աղբյուրներից անջատված, որսված և արտանետման բոլոր աղբյուրներից դեպի մթնոլորտային օդ արտանետումների վերաբերյալ վիճակագրական տվյալները, բացահայտվել են դրանց շարժընթացը պայմանավորող հիմնական գործոնները: Վիճակագրական տվյալների նշված ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է բնապահպանական հարկերի կարգավորման նորմատիվ-իրավական դաշտի առանցքային փոփոխությամբ (2018 թ. բնապահպանական վճարները փոխարինվեցին բնապահպանական հարկերով, որոնց իրավական կարգավորումը իրականացվում է հարկային օրենսգրքով) և 2018–2020 թթ. ընթացքում մթնոլորտային օդ արտանետումների համար բնապահպանական հարկի որոշ դրույքաչափերի՝ մինչև 30%-ով աստիճանաբար ավելացմամբ: Հետևաբար՝ դիտարկվող ժամանակահատվածը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու արտանետումների շարժընթացի միտումները՝ պայմանավորված վերոնշյալ փոփոխություններով: Աշխատանքում ուսումնասիրվել են նաև մթնոլորտային օդի պահպանությանը նպատակաուղղված նյութական խրախուսման կիրառման ազգային փորձն ու դրա արդյունավետությունը:

Հետազոտության համար որպես գիտական հիմք է հանդիսացել բնօգտագործման տնտեսագիտության և էկոլոգիական ուղղվածության ինչպես օտարալեզու, այնպես էլ հայերեն ուսումնական և գիտահետազոտական մասնագիտական գրականությունը, տեղեկատվական հիմք են ծառայել հետազոտության թեմայի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների հրապարակումները, գիտական հոդվածները, ՀՀ շրջակա միջավայրի պահպանության նորմատիվ-իրավական ակտերը, հարկային օրենսգիրքը, վիճակագրական կոմիտեի հրապարակումներն ու պաշտոնական կայքի տվյալ-

ները, պետական բյուջեի վերաբերյալ ֆինանսների նախարարության հաշվետվությունները, ինչպես նաև պետական մի շարք այլ մարմինների պաշտոնական տվյալներ և այլն:

Վերլուծություն ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում կիրառվող տնտեսական կառուցակարգը սկսել է ձևավորվել 1990-ական թվականներից: 1991 թ. հուլիսի 9-ին ընդունվել են «Բնության պահպանության մասին» ՀՀ օրենսդրության հիմունքները (այս օրենքը ուժը կորցրել է 2007 թ. հունվարի 4-ին), որի 5-րդ հոդվածը վերաբերում էր բնության պահպանության ապահովման տնտեսական մեխանիզմին (կառուցակարգին)[13]: Համաձայն այդ հոդվածի՝ բնության պահպանության ապահովման տնտեսական կառուցակարգն ընդգրկում էր վարձի գանձում բնական պաշարների օգտագործման, շրջակա միջավայրի աղտոտման և դրա վրա այլ թույլատրելի սահմաններում վնասակար ազդեցության համար, տուգանքների գանձում բնապահպանական օրենսդրության խախտումների դեպքում և այլն: Հետագայում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի և այդ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի ընդունման միջոցով շարունակվել է շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի ձևավորման ու զարգացման գործընթացը[14]:

2018 թ. սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքով (այս օրենսդրահիրավական փոփոխության արդյունքում, ինչպես արդեն նշել ենք, բնապահպանական վճարները փոխարինվեցին բնապահպանական հարկերով):

Այսպիսով՝ իրավական դաշտի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ ներկայումս բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության գործող տնտեսական կառուցակարգի հիմնական գործիքներն են:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար ՀՀ պետական բյուջե վճարվող վճար է[15]: Կարելի է ասել, որ բնօգտագործման վճարի հիմքում «օգտագործողը վճարում է» սկզբունքն է:

Ինչ վերաբերում է բնապահպանական հարկին, ապա դա բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է[16]: Ըստ էության, այս հարկի հիմքում «աղտոտողը վճարում է» սկզբունքն է: Տեսականորեն այսպիսի հարկերը էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարներ են, քանի որ այս դեպքում աղտոտողը փաստացի վճարում է շրջակա միջավայրի ասիմիլյացիոն ներուժի օգտագործման իրավունքի համար[17]:

Բնօգտագործման վճարներից և բնապահպանական հարկերից մթնոլորտային օդի պահպանության հարցում իրենց ուրույն դերն ու նշանակու-

---

[13] Տե՛ս «Բնության պահպանության մասին» ՀՀ օրենսդրության հիմունքներ, 1991 թ.:
[14] Տե՛ս «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը, 1998 թ.:
[15] Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, հոդված 197, 2016 թ.:
[16] Տե՛ս նույն տեղը, հոդված 161:
[17] Տե՛ս **Анисимов А. В.,** նշվ. աշխ., էջ 169:

թյունն ունեն վերջիններս, մասնավորապես՝ մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման մասով:

Ընդունված է առանձնացնել մթնոլորտային օդի աղտոտման երկու տեսակի աղբյուրներ՝ շարժական և անշարժ: Անշարժ աղբյուրներ են համարվում արդյունաբերությունը, շինարարությունը, ընդերքօգտագործումը, իսկ շարժական աղբյուր՝ ավտոտրանսպորտը: Տարբերակման այս տրամաբանությամբ էլ հարկային օրենսգրքով սահմանված է մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի հաշվարկման մեթոդական երկու մոտեցում՝ ըստ աղտոտման աղբյուրների տեսակի:

Անշարժ աղբյուրների դեպքում բնապահպանական հարկի մեծությունը հաշվարկվում որպես է մթնոլորտային օդ արտանետված վնասակար նյութերի փաստացի ծավալների և դրանց համար համապատասխանաբար սահմանված դրույքաչափերի արտադրյալ: Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի համար դրույքաչափերը սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով[18]: Ստորև ներկայացված են այդ դրույքաչափերից մի քանիսը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը[19] (դրամ)

Մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութեր	*Դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտանետված յուրաքանչյուր տոննայի համար*
Փոշի	2340
Ածխածնի մոնօքսիդ	312
Ազոտի օքսիդներ (վերահաշված ըստ ազոտի երկօքսիդի)	19240
Ծծմբային անհիդրիդ	2340
Քլորոպրեն	117000

Հարկ է նշել նաև, որ Երևանում, ինչպես նաև ազգային պարկերի տարածքներում արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար սահմանված դրույքաչափերն ավելացվում են 1.5 անգամ, իսկ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան սահմանված սահմանային թույլատրելի արտանետումների ծավալները գերազանցելու, ապօրինի արտանետումների դեպքում կիրառվում է սահմանված դրույքաչափերի 5, 10 և նույնիսկ 25-ապատիկը: Ընդհանուր առմամբ, բնապահպանական հարկերը, սահմանված նորմատիվների շրջանակներում, վերաբերում են արտադրական ծախքերին, իսկ գերնորմատիվային արտանետման համար գումարը վճարվում է շահույթի հաշվին:

Այսպիսով՝ ուսումնասիրությունների ընթացքում պարզ դարձավ, որ անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդի աղտոտման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը 2018–2020 թթ. ավելացել են շուրջ 30%-ով, կիրառվում են տարբերակված դրույքաչափեր ըստ աղտոտման վայրի, սահմանված են դրույքաչափերի համեմատաբար բարձր գործակիցներ գերնոր-

[18] Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, հոդված 167, 2016 թ.::
[19] Տե՛ս նույն տեղը, հոդված 167, 2016 թ.:

մատիվային և ապօրինի արտանետումների համար: Ուստի հետաքրքիր է, թե վերջին տարիներին այսօրինակ կառուցակարգի պայմաններում ինչպիսին է էկոլոգիական պատկերը:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ-ում արտանետման անշարժ աղբյուրներից անջատված, որսված և մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2016–2020 թթ.: Որսված (վնասազերծված) նյութերի քանակը ներառում է բոլոր տեսակի աղտոտիչները, որոնք որսվում (վնասազերծվում) են փոշեորսիչ (գազամաքրիչ) կայանքներում անշարժ (ամրակայված) աղբյուրներից անջատված վնասակար նյութերի ընդհանուր ծավալից[20]:



Գծապատկեր 1. ***Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված, որսված և մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը ՀՀ-ում 2016–2020 թթ.[21] (հազար տոննա)***

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը դիտարկվող ժամանակահատվածում աճել է՝ 2016 թ. համեմատությամբ 2020 թ. ավելանալով շուրջ 29%-ով: Ուշագրավ է նաև այն փաստը, որ այս ժամանակաշրջանում ավելացել է նաև արտանետման անշարժ աղբյուրներից անջատված նյութերից որսված վնասակար նյութերի քանակը (աճը կազմել է 274%): Սակայն պետք է արձանագրել, որ վնասակար նյութերից որսում, մասնավորապես՝ 2020 թ., կատարվել է բացառապես Արարատի և Կոտայքի մարզերում, իսկ այլ տարիներին Երևան քաղաքում և մնացած մարզերում այդ ցուցանիշը զրոյական կամ բավականին ցածր մակարդակում է եղել: Այս երևույթը, թերևս, պայմանավորված է նշված մարզերում ցեմենտի գործարանների առկայությամբ: Ցեմենտի գործարաններում անջատվող վնասակար նյութերի ծավալը մեծ է, միաժամանակ բարձր է նաև անջատված արտանետումների որսման ցուցանիշը. օրինակ՝ «Արարատցեմենտ» ՓԲԸ-ում փոշու կլանման վառարանների արդյունավետությունը կազմում է 99.7%[22]:

---

[20] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2021, էջ 238, https://www.armstat.am/am/?nid=586&year=2021

[21] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին» հրապարակման տվյալների հիման վրա, https://www.armstat.am/file/article/eco_book_2020_8.pdf

[22] Տե՛ս «ԵՀԳԳ արևելյան երկրներում օդի որակի կառավարում» AIR-QGOV «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում» պիլոտային ծրագիր, հավելված I. Արդյունաբերական գործունեության և հիմնական աղտոտող ոլորտների բնապահպանական արդյունավետության գնահատում, 2013 թ., էջ 46, https://europa.eu/capacity4dev/file/22137/download?token=IlZIsXwa

Այսպիսով՝ հաշվի առնելով նաև այն, որ վերջին տարիներին ՀՀ-ում ցեմենտի արտադրության ծավալները շարունակաբար աճել են և 2020 թ. հասել 715 հազար տոննայի[23]՝ 2016 թ. համեմատությամբ ավելանալով շուրջ 268%-ով, կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին անշարժ աղբյուրներից անջատված և որսված վնասակար նյութերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է հենց ցեմենտի արտադրության ավելացմամբ:

Այնուամենայնիվ, համաձայն գծապատկերի տվյալների, մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է, ինչը էկոլոգիական տեսանկյունից միանգամայն ողջունելի շարժընթաց է: Սակայն այս նվազումը հիմնականում կապված է 2018 թ. Ալավերդու պղնձաձուլական գործարանի գործունեության դադարեցման հետ: Դա պայմանավորված էր Կառավարության կողմից գործարանին այլևս գերնորմատիվային արտանետումների թույլտվություն չտալով: 2017 թ. հոկտեմբերի 1-ից, չնայած ծծմբային անհիդրիդի տարեկան 5600 տոննա սահմանային թույլատրելի սահմանաչափի թույլտվությանը, Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտանետումների ծավալը մթնոլորտ կազմել է տարեկան շուրջ 38000 տոննա: Վերոնշյալ արտանետումների դիմաց 2017 թ. արդյունքներով շահագործող ընկերությունը ՀՀ պետական բյուջե է վճարել 323 մլն ՀՀ դրամ, իսկ 2018 թ. հունվար–սեպտեմբեր ամիսների աշխատանքի արդյունքներով՝ 340 մլն ՀՀ դրամ[24]:

Հենց այս հանգամանքով է պայմանավորված նաև վերջին տարիներին ՀՀ-ում արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի համար բնապահպանական հարկերի շեշտակի նվազումը (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի համար բնապահպանական հարկերը ՀՀ-ում 2016–2020 թթ.[25] (մլն դրամ)***

---

[23] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2021, էջ 332, https://www.armstat.am/am/?nid=586&year=2021

[24] Տե՛ս Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն, https://miningmetal.am/news/93 (30.01.2022)

[25] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_8%20Environment_(J)%20Environmental%20financing/EE-j-2.px/table/tableViewLayout2/?rxid=f66c181d-56c1-4617-9fdd-b73e7fdaf699 (05.02.2022)

Ինչ վերաբերում է արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի հաշվարկին, ապա պետք է նշել, որ ՀՀ-ում գրանցված բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների համար բնապահպանական հարկի հաշվարկն իրականացվում է ըստ ավտոտրանսպորտային միջոցների զանգվածի առանձնացված 3 խմբերի, իսկ մնացած ավտոտրանսպորտային միջոցների դեպքում բնապահպանական հարկի հաշվարկի համար հիմք է ծառայում շարժիչի հզորությունն ըստ ձիաուժերի: ՀՀ-ում չգրանցված ավտոտրանսպորտային միջոցների՝ մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկերի հաշվարկը կատարվում է ըստ ավտոտրանսպորտային միջոցի նկարագրի և դրա արտանետման նորմաներին համապատասխանության:

ՀՀ-ում ավտոտրանսպորտը մթնոլորտային օդի աղտոտման գործում մեծ մասնաբաժին ունի (գծապատկեր 3): 2020 թ. մթնոլորտային արտանետումները ՀՀ-ում կազմել են 295.4 հազար տոննա, որի 70.8%-ը բաժին է ընկել արտանետման շարժական աղբյուրներին:



Գծապատկեր 3. ***Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը և դրանց մասնաբաժինը ընդհանուրի մեջ ՀՀ-ում 2016–2020 թթ.***[26]

Ի տարբերություն արտանետման անշարժ աղբյուրների՝ շարժական աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2016–2020 թթ. աճել է, ինչը ՀՀ-ում ավտոմեքենաների թվի ավելացման հետևանք է: Սրան, զուգահեռաբար, ավելացել են նաև արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի համար բնապահպանական հարկերը՝ 2020 թ. կազմելով ավելի քան 2.2 միլիարդ դրամ[27]:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ, ընդհանուր առմամբ, ՀՀ-ում գործող բնապահպանական հարկերը չեն իրացնում կանխարգելման սկզբունքը և

[26] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին» հրապարակման տվյալների հիման վրա, https://www.armstat.am/file/article/eco_book_2020_8.pdf

[27] Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք, https://www.minfin.am/hy/ (19.02.2022)

չեն նպաստում մթնոլորտային օդի աղտոտման կրճատմանը, ուստի անհրաժեշտ են այլ մոտեցումներ ևս: Մասնավորապես՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 35-ում նշված է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների նյութական ու բարոյական խրախուսման միջոցներ, որոնք խթանում են մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների իրականացումը[28]:

Վերջին ժամանակներում ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում որպես նյութական խրախուսման միջոց կարելի է նշել էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ներմուծման համար սահմանված հարկային արտոնությունը միայն: Դրա շրջանակներում 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ը էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ներմուծումը, օտարումը ազատված էին ԱԱՀ-ից[29]: Զուգահեռաբար, 2020 թ. ապրիլից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը, ԵՏՀ խորհրդի որոշմամբ, զրոյացվել էր Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը էլեկտրական շարժիչներով տրանսպորտային միջոցների առանձին տեսակների համար[30]: Այս ամենի արդյունքը եղել է այն, որ 2019 թ. հուլիսի 1-ից մինչև 2021 թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ է ներմուծվել էլեկտրական շարժիչով 5291 տրանսպորտային միջոց, որից 668-ը՝ 2019 թ., 2055-ը՝ 2020 թ., 2468-ը՝ 2021 թ. առաջին կիսամյակում միայն. հատկանշական է, որ 2018 թ. ներմուծվել էր ընդամենը 12 էլեկտրամոբիլ[31]: Նման դրական տեղաշարժի արդյունքում ՀՀ-ում ԱԱՀ-ից ազատման վերոնշյալ արտոնության ժամկետը երկարաձգվեց մինչև 2024 թ. հունվարի 1-ը[32]:

Համաձայն միջազգային կառույցների կողմից իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների՝ էլեկտրական շարժիչով մեքենայի շահագործումը, ի տարբերություն բենզինով կամ դիզելային վառելիքով աշխատող մեքենաների, տարեկան, միջին հաշվով, 4.6 տոննա CO_2-ի արտանետումների կրճատում է ապահովում[33]: Հետևաբար՝ հիշատակված հարկային արտոնությունների արդյունքում, ըստ էության, կանխվել են տարեկան հազարավոր տոննա արտանետումներ դեպի մթնոլորտ, ինչն էլ խոսում է խթանող գործիքակազմի արդյունավետության մասին և կարևորում դրա կիրառության ընդլայնման հնարավորությունների բացահայտումն ու իրականացումը:

---

[28] Տե՛ս ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին», 1994, https://www.arlis.am/documentview.aspx?docID=71305

[29] Տե՛ս ՀՀ օրենքը «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», 2019, ՀՕ-63-Ն, https://www.arlis.am/documentview.aspx?docid=131533

[30] Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք, http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/16-03-2020-4.aspx (26.02.2022)

[31] Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15722&year=2021&month=12&day=09&lang=arm (26.02.2022)

[32] Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, հոդված 64, կետ 57, 2016:

[33] Տե՛ս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք, http://www.mnp.am/news/elektrakan-sharjichoc-transport (05.03.2022)

Եզրակացություններ: Ընդհանրացնելով ուսումնասիրությունները՝ կարելի է նշել, որ ՀՀ-ում շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգը ձևավորման սկզբից ի վեր գտնվում է շարունակական բարեփոխումների և զարգացման մեջ: ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի հիմնական գործիք են բնապահպանական հարկերը: Համաձայն հարկային օրենսգրքի՝ սահմանված է մթնոլորտային օդի արտանետումների համար բնապահպանական հարկի հաշվարկման մեթոդական երկու մոտեցում՝ ըստ արտանետման անշարժ և շարժական աղբյուրների: Արտանետման անշարժ աղբյուրների դեպքում բնապահպանական հարկի հաշվարկի հիմքում արտանետվող նյութի տեսակներն են և արտանետումների համապատասխանությունը սահմանված նորմերին: Գերնորմատիվային և ապօրինի արտանետումների դեպքում կիրառվում են սահմանված դրույքաչափերի բազմապատիկ մեծություններ, որոնք, ըստ էության, տուգանքներ են: Գործադրվում են նաև տարբերակված դրույքաչափեր՝ ըստ արտանետման աղբյուրի գտնվելու վայրի, ինչը միանգամայն ողջունելի մոտեցում է, սակայն առանձնացված տարածաշրջանները խիստ սահմանափակ են և ընդլայնման կարիք ունեն: Արտանետումների վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում աղտոտիչների որսման ցուցանիշը բավականին ցածր է կամ նույնիսկ գտնվում է զրոյական մակարդակում: Բացառություն են կազմում Արարատի և Կոտայքի մարզերը, ինչը պայմանավորված է նշված մարզերում ցեմենտի արտադրությամբ և դրա կազմակերպման տեխնոլոգիական առանձնահատկություններով: Որսման ցածր մակարդակը, թերևս, պայմանավորված է բնապահպանական հարկի կիրառվող մեթոդական մոտեցմամբ, քանի որ դա չի խթանում էկոլոգիական տեսանկյունից ավելի անվնաս տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը, ինչը միանգամայն մտահոգիչ է, ուստի անհրաժեշտ է վերանայել կիրառվող մեթոդաբանությունը՝ դիտարկելով կանխարգելման սկզբունքի իրացման հնարավորությունները:

Արտանետման շարժական աղբյուրների դեպքում բնապահպանական հարկի մեծությունը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցի տեսակով և շարժիչի հզորությամբ: Այս դեպքում ընդհանրապես բացակայում են արտանետման նորմատիվները, իսկ կիրառվող դրույքաչափերը կանխարգելող բնույթի չեն: Ավտոտրանսպորտային արտանետումների վերաբերյալ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դրանք վերջին տարիներին աճ են արձանագրել և գերակշռում են ընդհանուր արտանետումների մեջ, ինչն էլ ընդգծում է կիրառվող բնապահպանական հարկի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:

Որպես ավտոտրանսպորտային արտանետումների կրճատման դրական փորձ արձանագրվել է մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի նոր գործիքի՝ հարկային արտոնության կիրառությունը, որը էականորեն նպաստել է հանրապետությունում էլեկտրամոբիլների թվի ավելացմանը:

Ամփոփելով կարելի է նշել, որ մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը, չնայած առկա թերություններին, կարող է առավել արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորման բավա-

ռար հիմք հանդիսանալ, ուստի ժամանակն է հետևողական քայլեր ձեռնարկել գործող տնտեսական կառուցակարգի կատարելագործման ուղղությամբ՝ այդպիսով նախադրյալներ ստեղծելով կայուն զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. «Բնության պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքներ, 1991:
2. ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին», 1994:
3. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, 2016:
4. ՀՀ օրենքը «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», 2019, ՀՕ-63-Ն, https://www.arlis.am/documentview.aspx?docid=131533
5. Գևորգյան Ս.Ա., Պետրոսյան Ռ.Ա., Գևորգյան Ա.Պ., Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2014:
6. Թորոսյան Ն.Ս., Չարխիֆալակյան Լ.Վ., Մինասյան Ս.Ա., Պետրոսյան Մ.Զ., Թորոսյան Գ.Հ., Էկոլոգիական էկոնոմիկա: Դասագիրք, ՀԱՊՀ, Եր., «Ճարտարագետ», 2018:
7. Հակոբյան Լ. Լ., Բնօգտագործման էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Եր., ՀԱԱՀ, 2014:
8. «ԵՀԳԳ արևելյան երկրներում օդի որակի կառավարում» AIR-QGOV «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում» պիլոտային ծրագիր, հավելված I. Արդյունաբերական գործունեության և հիմնական աղտոտող ոլորտների բնապահպանական արդյունավետության գնահատում, 2013 թ., https://europa.eu/capacity4dev/file/22137/download?token=IIZIsXwa
9. ՀՀ վիճակագրական կոմիտե, Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին, https://www.armstat.am/file/article/eco_book_2020_8.pdf
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2021, https://www.armstat.am/am/?nid=586&year=2021
11. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, https://www.armstat.am/am/https://www.armstat.am/file/article/eco_book_2020_8.pdf
12. ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք, https://www.minfin.am/hy/
13. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք, http://www.mnp.am/news/elektrakan-sharjichoc-transport
14. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15722&year=2021&month=12&day=09&lang=arm
15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք, http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/16-03-2020-4.aspx
16. Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն, https://miningmetal.am/news/93

17. Анисимов А. В., Прикладная экология и экономика природопользования: учебное пособие. Ростов-на-Дону: Феникс, 2007.
18. Каракеян В. И., Экономика природопользования: учебник. М., Издательство «Юрайт», 2011.
19. Кенесары Д.У., Кенесариев У.И., Оразымбетова А.М., Досмухаметов А.Т., Кенесары А.У., Применение методологии Анализа рисков здоровью населения Казахстана от загрязнения атмосферного воздуха // Вестник КазНМУ, №3, 2014, https://cyberleninka.ru/article/n/primenenie-metodologii-analiza-riskov-zdorovyu-naseleniya-kazahstana-ot-zagryazneniya-atmosfernogo-vozduha
20. Макар С. В., Экономика природопользования: конспект лекций, 2-е изд., М., Издательство «Юрайт», 2011.
21. Москаленко А.П., Гутенев В.В., Москаленко С.А., Денисов В.В., Экономика природопользования и ресурсосбережения: учебное пособие. Ростов-на-Дону: Феникс, 2014.
22. Папенова К.В., Экономика природопользования: учебник под редакцией– Э40. М.: ТЕИС, ТК Велби, 2010.
23. Шимова О.С., Соколовский Н.К., Экономика природопользования: учеб. пособие, 2-е изд., М.: ИНФРА-М, 2011.
24. WHO, Burden of disease from ambient air pollution for 2016, April 2018, https://www.who.int/airpollution/data/AAP_BoD_results_May2018_final.pdf
25. THE WHITE HOUSE, https://www.whitehouse.gov/ceq/news-updates/2021/12/13/icymi-president-biden-signs-executive-order-catalyzing-americas-clean-energy-economy-through-federal-sustainability/

ГАРРИ ГАСПАРЯН
Аспирант кафедры экономики природопользования АГЭУ

Экономический механизм охраны атмосферного воздуха в Республике Армения.– В последнее время человечество начало осознавать, что развитие экономики тесно связано с эффективностью охраны окружающей среды. Примечательно, что решение экологических проблем не препятствует, а наоборот, способствует развитию экономики, создавая возможности для устойчивого развития. Мировой опыт в области охраны окружающей среды свидетельствует о том, что эффективным подходом к охране окружающей среды, в том числе атмосферного воздуха, является применение экономического механизма. Следовательно, в работе изучен экономический механизм, применяемых в РА в сфере охраны окружающей среды, в частности, атмосферного воздуха. Этот механизм проанализирован по типам источников выбросов,

рассмотрена динамика выбросов в атмосферный воздух и основные факторы, обуславливающие их, представлен отечественный опыт экономического стимулирования охраны атмосферного воздуха, в результате всего вышеуказанного сделаны соответствующие выводы.

Ключевые слова: *атмосферный воздух, экономический механизм, экологический налог, стационарный источник, передвижной источник, налоговые льготы*
JEL: Q53, Q57
DOI: 10.52174/1829-0280_2022.2-132

GARRI GASPARYAN
PhD Student of the Chair of Environmental Economics of ASUE

Economic Mechanism of Atmospheric Air Protection in the Republic of Armenia.– Recently, humanity has begun to realize that economic development is closely linked to the effectiveness of environmental protection. It is noteworthy that the solution of environmental problems does not hinder, but, on the contrary, contributes to the development of the economy, creating opportunities for sustainable development. World experience in the field of environmental protection shows that an effective approach to environmental protection, including atmospheric air, is the use of an economic mechanism. Therefore, the paper studies the economic mechanism used in the Republic of Armenia in the field of environmental protection, in particular, atmospheric air. That mechanism is analyzed according to the types of emission sources, the atmospheric air emission trends and the main factors conditioning them are observed, the domestic experience of economic stimulation of atmospheric air protection is presented, as a result of all this, the relevant conclusions are drawn.

Keywords: *atmospheric air, economic mechanism, environmental tax, stationary source, mobile source, tax benefits*
JEL: Q53, Q57
DOI: 10.52174/1829-0280_2022.2-132